ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/43

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.04.2018թ. թիվ 03/26-3/7206-18 գրությամբ «Ագաթագիր» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02562861/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 12.04.2018թ. թիվ 01/61-8392 գրության հիման վրա, 18.04.2018թ. նախաձեռնել է «Ագաթագիր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 12.04.2018թ. թիվ 01/61-8392 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևայլաը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/69» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին (այսուհետև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Ագաթագիր» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն):

Ընկերության հայտում արձանագրվել էր անհամապառտասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում (Հավելված 1) մասանակցի ՀՎՀՀ-ն նշված է սխալ (չի համապատասխանում «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներին): Երևանի քաղաքապետարանը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ նաև կարգ) 41-րդ կետի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը՝ առաջարկելով Ընկերությանը սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

Ըմնկերությունը սահմանվաշ ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Արծրուն Վարդանյանը:

3. <u>«Ագաթագիր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ագաթագիր» ՍՊԸ-ն 16.05.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ իր առարկություններն է հայտնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով վերջինիս մոտ նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ: Մասնավորապես, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Գտնում ենք, որ առկա չեն հիմքեր ընկերությանը ցուցակում ներառելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

«Ագաթագիր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտ է ներկայացրել և մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/170» ծածկագրով գնման ընթացակարգին:

Սակայն, Ընկերության հայտի փաթեթը ստորագրվել է ոչ թե տնօրեն Մարինե Աղամալյանի, այլ փոխտնօրեն Բենիամին Աղամալյանի կողմից, որը չի ունեցել նման լիազորություն: Բացի այդ, Ընկերության հայտի էլեկտրոնային ստորագրությունը ներկայացված փաստաթղթում չի արտատպվել և ցույց է տալիս որպես սխալ՝ ոչ լիարժեք ստորագրություն (недействительная подпись):

Ընկերությունը դիմել է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին և խնդրել է ուսումնասիրել «Ագաթագիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը և տալ եզրակացություն՝ նշված փաստաթղթերը պատշաճ կերպով վավերացված լինելու վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից որևէ պատասխան չի ստացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ելնելով վերը նշված իրավական և փաստական հիմքերից, Ընկերությունը գտնում է, որ այս պարագայում Ընկերության հայտը պետք է բավարար չգնահատվեր և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և 41-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան մերժվեր «Ագաթագիր» ՍՊԸ-ի հայտը, իսկ վերոհիշյալ օրենսդրական նորմերի պահպանման արդյունքում «Ագաթագիր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքեր առկա չէին լինի, քանի որ պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Ընկերության հայտը մերժելու արդյունքում չէին կարող ի հայտ գալ Պատվիրատուի կողմից արձանագրված խախտումները»:

Ընկերությունը 10.05.2018թ. նույնաբովանդակ գրությամբ դիմել էր նաև ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով վերջինիս հայտնել դիրքորոշում ներկայացված իրավիճակի վերաբերյալ, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բարձրացված հարցի վերաբերյալ որևէ դիրքորոշում չէր ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/43 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2018թ. թիվ 03/26-3/7206-18 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 12.04.2018թ. թիվ 01/61-8392 գրությունը, «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/170» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Ագաթագիր» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/170» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 03.04.2018թ. նիստի թիվ 2, և 05.04.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «Ագաթագիր» ՍՊԸ-ի 16.05.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությունը.

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/170» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Ագաթագիր» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 03.04.2018թ. կայացած նիստի N 2 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ի հայտի գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում (Հավելված 1) մասանակցի ՀՎՀՀ-ն նշված է սխալ:

Գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը՝ առաջարկելով «Ագաթագիր» ՍՊԸ-ին սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

05.04.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը.
- 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի

Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով(...):

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:
- 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
- 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:
- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/170» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

• 7.10 կետի համաձայն՝ եթե նույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ տեղի ունեցած նիստին Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին է հայտնել նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ Ընկերության առարկությունները: Մասնավորապես, ըստ վերջինիս, Ընկերության հայտը Հանձնաժողովի կողմից արդեն իսկ առաջին փուլում պետք է գնահատվեր անբավարար և Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան մերժվեր, իսկ վերոհիշյալ օրենսդրական նորմերի պահպանման արդյունքում «Ագաթագիր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքեր առկա չէին լինի, քանի որ պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Ընկերության հայտը մերժելու արդյունքում չէին կարող ի հայտ գալ Պատվիրատուի կողմից արձանագրված՝ Ընկրությանը վերագրվող խախտումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

• 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 321-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

• 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը ստորագրվել են Ընկերության փոխտնօրեն Բենիամին Աղամալյանի կողմից, որը նշված փաստաթղթերը ստորագրելու պահին չի ունեցել Ընկերության տնօրեն Մարինե Աղամալյանի կողմից տրված նման լիազորություն: Ըստ այդմ, Ընկերության հայտի էլեկտրոնային ստորագրությունը փաստաթղթում արտացոլվել է որպես սխալ՝ ոչ վավեր ստորագրություն (недействительная подпись):

Նկատի ունենալով, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը ստորագրվել են ոչ պատշաճ ձևով լիազորված անձի կողմից՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը Ընկերության հայտը բավարար գնահատելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 42-րդ կետով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ նման պայմաններում «Ագաթագիր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար բավարար հիմքեր առկա չեն, քանի որ, եթե Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը գնահատելիս պահպանվեին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ապա Ընկերության հայտը վերջինիս կողմից կմերժվեր, ինչի արդյունքում ի հայտ չէր գա ընթացակարգ նախաձեռնելու համար հիմք հանդիսացած՝ Ընկերությանը վերագրվող խախտումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2018թ. թիվ 03/26-3/7206-18 գրությամբ «Ագաթագիր» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02562861/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձի **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**